

Այս դասի (մտափակցնող ներածական տեսանյութ+ դասի տեքստ+ բառարան+ինքնաստուգիչ հարցեր) յուրացման համար հարկավոր է մինչև
4 ժամ:

ԴԱՍ 3

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ ԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Ցուցումներ

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ (հասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռուստուցման բաժնում և հեռուստուցման փաթեթի կրիչում)



Մինչև 5 րոպե

ՀՀ Սահմանադրության [1] 162-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները:

Ուշադրությամբ կարդացե՛ք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցե՛ք հաջորդ մասերին /ինքնաստուգիչ հարցեր, առաջադրանք/:

ՀՀ-ում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:



Մինչև 190 րոպե

«-ում գոյություն չունեն անչափահասների գործերով հատուկ դատարաններ, սակայն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում դատավորները գործում են մասնագիտացված բաժանման համապատասխան: Մասնավորապես, ՀՀ դատական օրենսգրքի [2] 21.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ դատական օրենսգրքի 21.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարան մուտքագրված քրեական, քաղաքացիական և վարչական գործերն անհապաղ մուտք են արվում համակարգչային ծրագիր և նույն օրը՝ ժամը 20:00-ին, հավասարաչափ բաշխվում են տվյալ դատարանի համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորների միջև՝ պատահական ընտրությամբ և հաշվի չառնելով գործերի մուտքագրման հերթականությունը: Միաժամանակ, ՀՀ դատական օրենսգրքի 21.1-րդ հոդվածի 12-րդ մասը սահմանում է, որ առանձին տեսակի գործերի բաշխման առանձնահատկությունները սահմանում է Դատարանների նախագահների խորհուրդը՝ հիմք ընդունելով պատահական բաշխման սկզբունքը այնքանով, որքանով այն իր էությամբ (mutatis mutandis) կիրառելի է այդ առանձնահատկությունների սահմանման նկատմամբ:

Դատարանների նախագահների խորհուրդն իր 2011թ. օգոստոսի 26-ի «ՀՀ առաջին ատյանի դատարանների նստավայրերը և դատավորների մասնագիտացումների ցանկը հաստատելու մասին» թիվ 16Լ որոշմամբ ՀՀ առաջին ատյանի յուրաքանչյուր դատարանում առանձնացրել է անչափահասների գործեր քննող առանձին դատավորներ, որոնք, ի թիվս այլ քրեական գործերի, քննում են նաև անչափահասների մասնակցությամբ քրեական գործեր: Սրանով, ըստ էության, փորձ է արվել դատական համակարգում ունենալ որոշակի մասնագիտացում՝ պայմանավորված հենց անչափահասների հանգամանքով:

Հաշվի առնելով Պեկինյան կանոնների 12-րդ կետն այն մասին, որ անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման մեջ ներգրավված իրավապահ մարմինների աշխատակիցների համար հատուկ վերապատրաստման դասընթացներ անցկացնելը կարևոր հանգամանք է, համապատասխան գործեր քննող դատավորները մասնակցում են անչափահասների արդարադատության հետ կապված թեմաներով կազմակերպված դասընթացներին, սեմինարներին, որով և փորձ է արվում արդարադատության ավելի երեխայակենտրոն համակարգ ունենալուն և, երեխայի լավագույն շահը հաշվի առնելով, արդարադատություն իրականացնելուն:

Միաժամանակ պետք է նշել, որ անչափահասների արդարադատության համակարգն առաջին հերթին ուղղված է անչափահասների բարօրությանն ու այն բանի ապահովմանը, որ անչափահաս իրավախախտների նկատմամբ ներազդման ցանկացած միջոց միշտ լինի համահունչ ինչպես անձի, այնպես էլ իրավախախտման առանձնահատկություններին (Պեկինյան կանոններ, կետ 5.1): Միաժամանակ, «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրի» [5] 14-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, «Անչափահասների նկատմամբ դատավարությունը պետք է իրականացվի այնպես, որ հաշվի առնվեն նրանց տարիքը և նրանց վերադաստիարակությանն օժանդակելու ցանկալիությունը»:

Ինչ վերաբերում է դատարանի՝ արդարադատության համակարգում հիմնական դերակատարի գործառույթներին, ապա վերջիններս առաջին հերթին ու հիմնականում իրականացնում են քրեական բոլոր գործերի ու

քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված նյութերի քննության ու քրեական գործերի մինչդատական վարույթի նկատմամբ վերահսկողությունը: Այս գործառույթների իրականացումը որոշակի առանձնահատկություն է ստանում անչափահասների մասնակցությամբ քրեական գործեր կամ նյութեր քննելիս:

Կարևոր է նաև արդարադատության համակարգի այլ դերակատարների մասնագիտացված լինելու հանգամանքը: Այդպիսի դերակատարներ կարող են համարվել մեղադրանքի և պաշտպանության կողմերում հանդես եկողները՝ դատախազության, քննչական ու հետաքննության մարմինների աշխատակիցները մի կողմից և փաստաբանական համայնքի, այդ թվում՝ հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբանները, ինչպես նաև անչափահասի օրինական ներկայացուցիչը (խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչը)՝ մյուս կողմից, ինչպես նաև մանկավարժները՝ որպես և՛ մեղադրանքի, և՛ պաշտպանության կողմում հանդես եկող մասնակիցներ:

Այս առումով ուշադրության է արժանի ՄԱԿ-ի՝ Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ նվազագույն ստանդարտ կանոնների 4) 22.1-րդ կետը, համաձայն որի՝ անչափահասների գործերով զբաղվող ամբողջ անձնակազմի անհրաժեշտ մասնագիտական ձեռնահասությունն (կոմպետենտությունն) ապահովելու և պահպանելու համար հարկավոր է կիրառել մասնագիտական պատրաստությունը, աշխատանքի ընթացքում ուսուցումը, վերապատրաստման դասընթացներն ու ուսուցման համանման տեսակները:

Պետք է նշել, որ դեռևս հստակ մասնագիտացում առկա

չէ դատախազական համակարգում: Սակայն, ըստ ձևավորված որոշակի աշխատանքային պրակտիկայի, յուրաքանչյուր վարչական շրջանի կամ շրջանների դատախազությունում կամ մարզային դատախազությունում անչափահասների վերաբերյալ գործերի նկատմամբ դատախազական հսկողությունը հանձնարարվում են մեկ կամ երկու դատախազի, որը/որոնք էլ իրականացնում է/են համապատասխան հսկողություն:

Ինչ վերաբերում է քննչական մարմիններին, ապա ՀՀ քննչական կոմիտեի մարմիններում և ստորաբաժանումներում անչափահասների նկատմամբ կամ վերջիններիս կողմից կատարված հանցագործություններով մասնագիտացված քննիչներ չկան՝ բացառությամբ ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության անչափահասների գործերով մասնագիտացում ունեցող երեք քննիչների [7; 10]: Սակայն արդեն իսկ որոշակի քայլեր են իրականացվում այդպիսիք ունենալու համար:

Փորձե՛ք նկարագրել անհրաժեշտ քայլերն այդ ուղղությամբ:

ՀՀ ոստիկանության համակարգում առկա է անչափահասների գործերով որոշակի ծառայություն, որը հիմնականում իրականացնում է ռիսկային երեխաների գրանցում՝ համաձայն ՀՀ ՆԳՆ 1996թ. օգոստոսի 8-ի թիվ 633 հրամանով հաստատված հրահանգի [6; 14-15]:

Անչափահասների գործերով արդարադատության համակարգի կառուցվածքում կարևոր դերակատարներ են նրա պաշտպանը և օրինական ներկայացուցիչը: ՔԴՕ-ի [3] 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, երբ ... հանցանքը կատարելու պահին կասկածյալը կամ մեղադրյալն անչափահաս է: Ըստ էության, պաշտպան ունենալու

պարտադիր լինելը պայմանավորված է անչափահասների ավելի խոցելի խմբին դասվելու հանգամանքով: Միաժամանակ, ՔԴՕ-ի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է՝ 2) կասկածյալի կամ մեղադրյալի համար դժվար է ինքնուրույն իրականացնել պաշտպանության իր իրավունքը՝ համր, կույր, խուլ լինելու, խոսքի, լսողության, տեսողության ֆունկցիաների այլ էական խանգարման, երկարատև ծանր հիվանդության, ինչպես նաև տկարամտության, բացահայտ մտավոր թերզարգացածության, այլ ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով: Անչափահաս կասկածյալի, մեղադրյալի ինչպես պաշտպան, այնպես էլ օրինական ներկայացուցիչ ունենալու հնարավորությունը զգալիորեն նվազեցնում է վերջիններիս իրավունքների խախտման հավանականությունը:

Օրինական ներկայացուցչի գլխավոր խնդիրն անչափահասի իրավունքները և օրինական շահերը ներկայացնելն է քրեական դատավարությունում՝ անկախ նրանից՝ կասկածյալին, մեղադրյալին, տուժողին, թե վկային է ներկայացնում: Այսպիսով, օրինական ներկայացուցիչները հանդես են գալիս ինչպես մեղադրանքի, այնպես էլ պաշտպանության կողմում: Ավելին, երբեմն նրանք ներկայացնում են անչափահաս վկաների շահերը: Այսպես, ՔԴՕ-ի 76-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է. «Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչներ են համարվում նրանց ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները, որոնք քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում են դատավարության համապատասխան անչափահաս կամ անգործունակ մասնակցի օրինական շահերը: Օրինական ներկայացուցիչ

չունենալու դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը տուժողի, կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցիչ է նշանակում խնամակալության և հոգաբարձության մարմինն»:

Օրինական ներկայացուցիչը, լինելով քրեական դատավարության մասնակից, անչափահասի մոտ ունենալով իր իսկ կարգավիճակից բխող (օրինակ՝ ծնող կամ որևէ այլ աստիճանի հարազատ) առանձնահատուկ, վստահելի հարաբերություններ, տիրապետելով անչափահասի յուրահատկությունների վերաբերյալ տեղեկատվության, կարող է բավականին արդյունավետորեն նպաստել նրա իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

Քրեական դատավարությունում ներգրավված ցանկացած անչափահասի իրավունքներն ու օրինական շահերը ներկայացնելու միասնական մոտեցման հնարավորության ստեղծումը կարևոր երաշխիք է յուվենալ արդարադատության համակարգի ձևավորման գործում:

Անչափահաս վկաների իրավունքներն ու օրինական շահերը ներկայացնելու հարցին է նվիրված ՀՀ ՔԴՕ 87-րդ հոդվածը, որի 1-ին մասի համաձայն՝ «14 տարին չլրացած վկայի օրինական ներկայացուցիչը, իսկ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ նաև առավել բարձր տարիքի անչափահասի օրինական ներկայացուցիչն իրավունք ունի իմանալ ներկայացվող անձին քրեական վարույթն իրականացնող մարմին կանչելու մասին և մասնակցել քննչական կամ այլ դատավարական գործողությանը՝ ուղեկցելով նրան»:

Փորձե՛ք մտաբերել անչափահաս վկայի օրինական ներկայացուցչների մասնակցությամբ դեպքեր Ձեր մասնագիտական պրակտիկայից և վերլուծել նրանց մասնակցության արդյունավետությունը և դրան խոչընդոտող գործոնները:

Այսպիսով, անչափահաս վկայի օրինական

ներկայացուցիչն իրավունք ունի մասնակցելու նրա նկատմամբ իրականացվող ցանկացած վարույթային գործողության (հարցաքննության, քննչական փորձարարության կամ այլ քննչական ու դատավարական գործողությունների): Այսպես օրինակ, օժտված լինելով տեղեկացված լինելու իրավունքով, օրինական ներկայացուցիչը կարող է հանդես գալ որպես բավական գործուն երաշխիք՝ անչափահաս վկային բերման ենթարկելու կամ այլ նման հարկադրական իրավական գործընթացների իրականացման ժամանակ:



Անչափահաս վկայի օրինական ներկայացուցչի իրավունքները բավարար մանրամասնությամբ նախատեսված են ՀՀ ՔԴՕ 87-րդ հոդվածի 2-րդ մասում:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ «[նույն] հոդվածում թվարկված մասնավոր հետապնդման գործերով վարույթի հարուցման հիմք պետք է դիտել ոչ թե տուժողի, այլ դիմողի բողոքը, որի բացակայության դեպքում վարույթը ենթակա է կարճման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով:

(...) Վճռաբեկ դատարանը մասնավոր հետապնդման գործերով «դիմող» դիտում է այն անձանց, որոնց իրավունքները խախտվել են քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով, ինչպես նաև նրանց, ովքեր օրենքի ուժով հանդիսանում են անչափահաս կամ անգործունակ անձանց օրինական ներկայացուցիչներ, եթե խախտվել են նրանց խնամարկյալների իրավունքները:

Վերոնշյալ մոտեցումից բացառություն է այն դեպքը, երբ անձը, որի իրավունքները խախտվել են, իր անօգնական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման իրավիճակում քրեական գործ հարուցելու առիթն օրինական, իսկ հիմքերը բավարար լինելու դեպքում քրեական գործ հարուցելու մասին որոշում պետք է կայացվի հանրային մեղադրանքի գործերի հարուցման համար սահմանված ընդհանուր կարգով» («Վճռաբեկ դատարանի՝ 26.12.2008 թվականի ՎԲ-73/08 որոշում»):

«Վճռաբեկ դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշման արդյունքում կարելի է հանգել այն հետևության, որ անձի (անչափահասի)՝ իր անօգնական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով իրավունքները խախտված լինելու և իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանել չկարողանալու պարագայում քրեական գործ հարուցելու առիթն օրինական, իսկ հիմքերը բավարար լինելու դեպքում քրեական գործ հարուցելու մասին որոշում պետք է կայացվի հանրային մեղադրանքի գործերի հարուցման համար սահմանված ընդհանուր կարգով:

Անչափահասների գործերով արդարադատության համակարգի հաջորդ դերակատարը անչափահասների նկատմամբ քննչական և դատավարական այլ գործողությունների իրականացմանը մասնակից դարձվող մանկավարժն է:

«ՔԴՕ-ի 207-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ: Անչափահաս

Մանկավարժի
դատավարական
կարգավիճակի
հստակեցման ի՞նչ
ուղիներ եք տեսնում:

վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը:

Նման պահանջներ չեն գործում անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի դեպքում:

Անչափահասների նկատմամբ դատավարական գործողություններ իրականացնելիս մանկավարժի մասնակցությունը նաև նրա իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիք է: Մանկավարժը՝ որպես մանկական հոգեբանության ոլորտի մասնագետ, կարող է պաշտպանել անչափահասներին վնասող որոշակի գործոններից (կոպիտ վերաբերմունք, սխալ ձևակերպած հարցեր և այլն):

Պետք է նշել, որ ՀՀ ՔԴՕ-ում հստակեցված չէ ո՛չ մանկավարժի դատավարական կարգավիճակը, ո՛չ նրա գործունեության սահմանները անչափահասի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ոլորտում:

Մանկավարժը կարող է հանդես գալ և՛ պաշտպանության, և՛ մեղադրանքի կողմում (տուժողի հարցաքննության ժամանակ):

Ի տարբերություն պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի՝ մանկավարժն անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված գործողություններ իրականացնելիս կաշկանդված չէ այն անձի կամքով, որի շահերից ելնելով՝ կատարում է այդ գործողությունները:

Չնայած այն բանին, որ մանկավարժը, ինչպես վերը

նշվեց, իր գործողություններով նպաստում է անչափահասների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելուն, սակայն հրավիրվում է մասնակցելու գործի քննությանը քննիչի կամ դատարանի կողմից՝ մանկավարժության բնագավառում իր հատուկ գիտելիքները կիրառելու միջոցով քրեական դատավարությանը մասնակցող անչափահասների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու համար: Ուստի, որպես մանկավարժ պետք է հրավիրվեն այս ոլորտում գիտելիքներ և փորձառություն ունեցող անձինք: Վարույթն իրականացնող մարմինը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կարող է առաջադրել նաև որոշակի լրացուցիչ պահանջներ՝ պայմանավորված տվյալ քրեական գործի կամ անչափահասի անձնային առանձնահատկությամբ: Այսպես, որոշ դեպքերում նպատակահարմար է լինում որպես մանկավարժ ներգրավել անձի, որը տիրապետում է որոշակի հոգեկան շեղումներ ունեցող անձանց հետ աշխատելու փորձի: Այդ դեպքում մանկավարժից պահանջվում են նաև համապատասխան հատուկ գիտելիքներ և այդպիսի անչափահասների հետ աշխատանքային համապատասխան փորձ [9]:

Ինչ վերաբերում է անչափահաս դատապարտյալների պատժի կատարմանը, ապա ՀՀ քրեակատարողական հիմնարկների համակարգում գործում է «Աբովյան» քրեակատարողական հիմնարկը, որը և ապահովում է ազատությունից զրկման հետ կապված պատժատեսակների դատապարտված անչափահասների պատժի կատարումը:

Այսպիսով, այս դասի ընթացքում ներկայացրինք ՀՀ-ում անչափահասների գործերով արդարադատության համակարգի հիմնական դերակատարների՝

- քրեական գործերով վարույթ իրականացնող մարմինների,

- անչափահասների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն իրականացնող փաստաբանների ու անչափահասների օրինական ներկայացուցիչների,
- վարույթային գործողությունների ընթացքում անչափահասներին մասնագիտական աջակցություն ապահովող մանկավարժների իրավական կարգավիճակին և հիմնական գործառույթներին առնչվող,
- ինչպես նաև պատժի կատարման ապահովման մարմինների վերաբերյալ ներպետական օրենսդրական դրույթները:

Ինչ վերաբերում է անչափահասների գործերով արդարադատության վերաբերյալ միջազգային իրավական փաստաթղթերով առկա կանոնակարգումներին, ապա դրանք առավել հանգամանորեն կներկայացնենք հաջորդ դասին:

ԲԱՌԱՐԱՆ

Mutatis mutandis – Մութաթիս մութանդիս – Համապատասխան փոփոխություններով:

Պեկինյան կանոններ - ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/33 բանաձևով հաստատվել է Միավորված ազգերի կազմակերպության Նվազագույն ստանդարտ կանոնները: Այս կանոնները առաջարկվել են ՄԱԿ յոթերորդ Կոնգրեսի կողմից և վերաբերում են անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացմանը: «Պեկինյան կանոններ» անվանումը ևս առաջարկվել է ՄԱԿ յոթերորդ կոնգրեսի կողմից:

Յուվենալ արդարադատություն – (լատ. Juvenālis – երիտասարդական, jūstitia – արդարադատություն) անչափահասների կողմից կատարված իրավախախտումների գործերով արդարադատություն իրականացնելու համար գոյություն ունեցող իրավական համակարգ:

Երեխայակենտրոն արդարադատության համակարգ – Արդարադատության համակարգ, որը միտված է առաջին հերթին երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը՝ հաշի առնելով վարույթային գործողությունների կատարումը:



Ցուցումներ

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին, իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:



Մինչև 15 րոպե